Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

22 Հունիս , 2017 թ.

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

Վարկ No 5398

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ # SPAP II W- **1.1.1/1.i**

Տաշիրի ՀՄՇՏԿ վերանորոգում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել "**ՏԱՇԻՐԻ ՀՄՇՏԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ**" պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան Ֆինանսավորման Ծրագրերի կառավարման կենտրոնը հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Տաշիրի ՀՄՇՏԿ վերանորոգման** համար:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Հետաքրքրված թույլատրելի հայտատուները կարող են ամբողջական փաթեթը ներբեռնել www.gnumer.am կամ www.armeps.am կայքերից: Էլ գնումների համակարգում գրանցված Հայտատուները ավտոմատ կերպով կստանան սույն հրավերը՝ կցվաց Մրցութային փաստաթղթերի հետ մասին /համաձայն համապատասխան CPV կոդերի/: Ցանկացած կազմակերպություն կարող է գրանցվել էլ գնումների համակարգում և կարող է ներկայացնել Հայտը հետևյալ կայքում՝ www.armeps.am.

5. Հայտերը պետք է ներկայացվեն ARMEPS համակարգի միջոցով մինչև 2017թ. հուլիսի 20-ը, ժամը 15:00-ը:. Էլ գնումների համակարգը չի ընդունում վերջնաժամկետից ուշացված Հայտեր:

6. Ինչպես նշված է ՄՀ 19.3 կետում բոլոր Հայտերը պետք է ուղեկցվեն Մրցույթի ապահովման երաշխավորագրով:

7. Որակավորման պահանջները ներառում են.

- Նվազագույն միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի **250,000,000** ՀԴ հաշվարկած վերջին հինգ տարիների կտրվածքով:
- վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն մեկ պայմանագիր՝ քաղաքացիական շենքերի վերակառուցման: Ներկայացվող աշխատանքների արժեքը չպետք է պակաս լինի Հայտի գումարից:
- նվազագույնը **46,000,000** ՀՀ

դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ,

- հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված “Բնակելի, հասարակական և արտադրական”, ”Տրանսպորտային” “Հիդրոտեխնիկական”, ՛՛Կապի՛՛ և “Էներգետիկակ” լիցենզիաներ:
- Պայմանագիրը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ հիմնական տեխնիկաի առկայություն;
- Ծրագրի ղեկավար/մենեջեր հինգ տարվա աշխատանքային փորձով նմանատիպ բնույթի և ծավալի շինարարական աշխատանքների, առնվազն երեք տարվա մենեջերի փորձով: